ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Բեկյալ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/80 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	. Նստարան՝ Մետաղական հիմնակմախքով և փայտյա նստատեղերով նստարան: Նստարանը պետք է պատրաստված լինի առնվազն 2000x900մմ չափսերի: Մետաղական հիմնակմախքը պետք է պատրաստված լինի քառակուսի կտրվածքով խողովակից /առնվազն 40x40x3մմ չափսերի/, նստարանի 2 կողամասերում՝ եռակցումով /եռակցվող մասերը հղկել հղկաքարով/: Մետաղական կողամասերի բարձրությունը պետք է լինի առնվազն 630մմ:Մետաղյա կողամասերի ոտքերի ստորին մասում պետք է եռակցված լինի առնվազն 3 մմ հաստությամբ, առնվազն 70x70մմ չափսերի 4 մետաղական թիթեղներ՝ յուրաքանչյուրի վրա 4 անցքեր, հարթակին /հատակին/ ամրացնելու համար: Նստարանի անմիջապես նստատեղի տակ /փայտյա մասերի տակ, առջևում և ետնամասում/ պետք է 2 մետաղական կողամասերին եռակցված լինեն 2 հատ առնվազն 30x30 մմ չափսերի քառակուսի կտրվածքով խողովակներ, մետաղի հաստությունը առնվազն 1,5մմ: Մետաղական 2 կողամասերին՝ նստատեղի փայտերի ամրացման համար պետք է եռակցված լինեն պողպատյա անկյունակներ առնվազն 40x40x4մմ չափսերի և առնվազն 460 մմ երկարության, իսկ հենակի փայտերի ամրացման համար՝ պողպատե անկյունակներ առնվազն 40x40x4մմ, առնվազն 300 մմ երկարության: Նստարանի մեջտեղում՝ նստատեղի փայտյա մասերի տակ և հենակի փայտյա մասերի տակ տեղադրել առնվազն 30x20մմ հաստությամբ ուղղանկյուն կտրվածքով մետաղական խողովակ, մետաղի հաստությունը առնվազն 1,5մմ՝ եռակցելով հիմնակմախքին, իսկ փայտյա մասերին՝ հեղյուս և մանեկով /բոլտուգայկա/ ամրացված: Նստարանի հենակին /4հատ/ և նստատեղին /6հատ/ պետք է 2 մետաղական կողամասերին հեղյուսով և մանեկով ամրացված լինեն առնվազն 1900x60x40մմ չափսերի չորացրած հաճարի

	հղկված փայտյա մասեր՝ նստատեղի մասերում եզրերը կլորացվա։ Մետաղական մասերը պետք է ներկված լինեն երկշերտ /գույնը ընտրել պատվիրատուի պատվերով/։ Փայտյա մասերը պետք է լաքապատված լինեն հաճարի գույնը մգեցնող լաքով։ Թիկնակի վերին փայտյա մասի վրա, լազերային փորագրությամբ, պետք է փորագրված լինի ,,Մալաթիա-Սեբաստիա,,։ Նստարանների տեղադրումը իրականացնել պատվիրատուի ներկայացված հասցեներով։ Նստարանի մետաղական հիմնակմախքի պատրաստումը /կորոցումները/ իրականացնել պատվիրատուի կողմից ներկայացված գծագրին համապատասխան։ Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Բեկյալ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/80 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	